

վանքս, որ կոչի Կեչառիս», «ընդ հովանեաւ սր. Լուսաւորչիս, սր. Ածածնիս, սր. Նշանիս, սր. Յարութիւնիս եւ ամ. սրբոցս, որ աստ կան հաւաքեալ, ի հայրապետութե. ան. Թաղէսի, որ նստեալ է ի Վաղարշապատ քաղաքն. . .», եւ առաջնորդութեան սր. ուխտիս պն. ար. Փիլիպոսին» գրել է մի Մաշտոց: Տարաբաղդաբար յիշատակարանը կրտստ է, թերթ ընկած լինելու պատճառով, և թուական չունի, բայց, պն. ան. Փիլիպոսը նոյն է նախընթաց նոյնանուն անձի հետ (*):

Վերև յիշուած Առաքել սարկաւազը այս Փիլիպպոս եպիսկոպոսի աշակերտն էր, որ «ի թուականութեան հայկազան տումարի ՌԼԶ» (= 1587) գրել է մի աւետարան «ի հայրապետութեան տեառն սուրբ աթոռոյն էջմիածնայ Տէր Գրիգոր կաթողիկոսին, Տէր Առաքել կաթողիկոսին, Տէր Դաւիթ կաթողիկոսին», «ի յերկիրս Կարնոյ, որ կոչի Առզուրում, եւ աստուածապահ զեօզս, որ է Մալաձոր»: Աւետարանը շատ ճոխ նկարագրաբան յիտուն պատկերով եւ աստ խորանով, երկրորդ դալտեան պատկերի խաչի պատուանդանի մօտ չուքել է մի վարդապետ, վեղարով և փրկոնով, ձեռնամաձ և նորա կողքին շապիկ հաղած, տնջուրայով մի սարկաւազ, տակը գրուած «սուտանուն սարկաւաճ, և ուսուցիչն իմ արհիպիսկոպոսն Փիլիպպոս Կեչառեցին» (**): Քիչ առաջ տեսանք, որ Փիլիպպոս տէրն ինքն էլ մանրանկարիչ է եղել:

ԺԷ. դարում վանքը շէն էր. 1611 թուին Փիլիպպոս երէց իւր յիշատակարանի մէջ թուում է Կեչառիսի եկեղեցիները՝ Ս. Լուսաւորիչ, Ս. Նշան, Ս. Յարութիւն և Ս. Հովիտիմէ՝ «ուր է հանգուցեալ Պրօշ իշխանն» (***) : Նոյնպէս և Թովմաս վանանդեցին իւր ոտանաւոր ներբողի մէջ թուում է Կեչառիսի եկեղեցիները՝

«Իսկ սուրբ ուխտն Կեչառիս՝
 Նա լուսատու Հայոց ազգիս,
 Եկեղեցին սուրբ Գրիգորի,
 Ընդ Աւագու սուրբ Նշանի,
 Աստուածածին սրբասնեալ,
 Սուրբ Սիոնըն պաշտեցեալ
 Որ Պրօշի հանգրստ տուեալ.
 Սուրբ Սարգիսըն բարեմասնեալ,
 Յոր Յարութիւնըն կցորդեալ,
 Սուրբ Կարապետըն Յիսուսի՝
 Սուրբ Յակոբայ զուգեալ լինի.
 Հովիտիմէն զեղեցիկացեալ.
 Աստուածահայր Դաւիթ եղեալ,
 Ընդ մակազբեալսըն դասակցեալ,
 Ի կայանիս տեղիք գտեալ
 Քառասներորդ պատարագեալ» (*):

Այստեղ յիշուած շէնքերից կանգուն են կամ կրտսւերակ, ինչպէս տեսանք, միայն Ս. Գրիգորի տաճարը, Վասակաշէն կաթողիկէն, Ս. Նշանը, Ս. Յարութիւնը եւ Ժամատունը Աստուածածնի անունով. մնացածները փոքրիկ մատուռներ կամ Ժամատան խորանները պիտի լինին, ինչպէս Սուրբ Դաւիթ, Սուրբ (Յովհաննէս) Կարապետ:

Փիլիպպոս կաթողիկոսի Ժամանակ վանքի վանահայրն էր Յովհաննէս եպիսկոպոս (**): Մկրտիչ ոմն 1677 թուին «ի հայրապետութե. սր. աթոռոյն էջմիածնի ան. Յակոբայ կաթողիկոսին հայոց. և ի թագրութեն. Դիլլիպաշի շահ Սիլեմանին, որ կարմրագլուխ զոչէ եւ ի խանութեն. էրէվանան Սաֆի Դուլի, որ է որդի Ընքստամի» ստանում է մի աւետարան և նուիրում Կեչառիսի վանքին, զրչութեամբ Կարապետ երեցի «ի գաւառիս Կեղամա ի գեօզս որ զոչի Շաղվաքս» (***) :

Նահապետ կաթողիկոսի աշակերտն էր Յովհաննէս վարդապետ, որին ապա եպիսկոպոս ձեռնադրեց և նորա ձեռքով նուիրեց իւր Յայմաւուրքը Բջնիի Ս. Աստուածածին տաճարին (****):

(*) Ըստ Սմբատեանի (Փեղարքունի, 357) մի Մաշտոցի յիշատակարանի մէջ որպէս թէ 1498 թուին յիշուած է մի Փիլիպպոս պարոն տէր. սա նոյն անձն է, որ ապրում էր Թաղէոս Բ. ի Ժամանակ, բայց որովհետև յիշատակարանի մի մասը կտրուած է և թուականը չկայ, այլ միայն «ի հայրապետութե. ան. Թաղէոսի, որ նստեալ է ի Վաղարշապատ քաղաքն», շփոթել է Թաղէոս Ա. ի հետ, և իւր կողմից վերև յիշուած թիւը նշանակել:

(**) Արարատ, 1905, 722:

(***) Ալիշան, Այբ., 262: Խաղբակեանք Ա., 136:

(*) Ալիշ. Այբ. 262:

(**) Չաքարիա Սարկաւազ, Բ. 48, 137:

(***) Չեռ. էջմ. N° 335 (Յաւել. Բ. 43):

(****) Չեռ. էջմ. N° 1493, 610բ.: